ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/10706հ «22» 03 2019թ.

«Տ-ԻՆԴԱՍՏՐԻ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ.ԲԱԲՈՅԱՆԻՆ
ք.Երևան, Ներքին Շենգավիթ 11 փ.

Հարգելի Բաբոյան

Երևանի քաղաքապետարանի և «Տ-Ինդաստրի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.06.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին փուլի համար՝ մինչև 31.07.2018 թվական և 2-րդ փուլի համար՝ մինչև 20.08.2018 թվական:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի»:

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները իրականացվել են թերի, այն է՝ 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ապրանքները չեն մատակարարվել ամբողջությամբ և սահմանված ժամկետում:

Վերը նշվածի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի ընդհանուր գումարից՝ 37068018 (երեսունյոթ միլիոն վաթսունութ հազար տասնութ) ՀՀ դրամ, ընկերությանը վճարվել է 30584461 (երեսուն միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել նախատեսված ստանձնած պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Վ.Մեժունց
011 514-194